

Տ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐՏՈՓԻԼԻ ՍՈՐՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՅԵՎ ՆՐԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ.



АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
БИОЛОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ—СЕКТОР ГЕНЕТИКИ РАСТЕНИЙ

Т. СААКЯН

## **СОРТА КАРТОФЕЛЯ В АРМЕНИИ И ИХ БОЛЕЗНИ**

ИЗДАТЕЛЬСТВО АрмФАН-а  
ЕРЕВАН 1 9 3 9

✓  
ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ—ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՍԵԿՏՈՐ

635.21(47.925)

S- 52

S. ՏԷՄԱՆԱԿԱՆ

Կրկն,

635.21: 632

ՍՏՈՒԳԱՄ Է. 1981

**ԿԱՐՏՈՔԻԼԻ ՍՈՐՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՅԵՎ ՆՐԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

446  
A 18923

A 18923



ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1 9 8 9

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական ֆիլիալի Նախագահության վարժումով:  
Նախագահի սեղական՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Մեր սոցիալիստական դաշտերի բերքատուության բարձրացման բնագաղափարում, ագրոտեխնիկական խնդիրների հետ միասին, չափազանց խոշոր նշանակութուն ունի սերմաբուծության և տեսակավոր սորտերի մշակության խնդիրը: Յեթե հացաբույսերի գծով մեր լայն կոլտնտեսական մասսաները ծանոթ են մեզ մոտ մշակվող արժեքավոր սորտերին, ապա նույնը չի կարելի ասել կարտոֆիլի նկատմամբ: Մինչդեռ կարտոֆիլի մշակությունը, բերքատու սորտերի հայտաբերումը չափազանց խոշոր նշանակութուն ունի մեր սոցիալիստական գյուղատնտեսության համար:

Այս տեսակետից դիտությունների թեկնածու Տ. Սահակյանի այս հանրամատչելի աշխատանքը շատ արժեքավոր և ոգևտակար՝ կոլտնտեսական առաջավոր ակտիվի և ագրոտեխնիկական լայն կադրերի համար:

Գրքույկում հեղինակը համառոտ ձևով ծանոթացնում է իմ Հայաստանում մշակվող կարտոֆիլի սորտերին և նրանց առանձնահատկություններին, կանգ է առնում կարտոֆիլի տարածված հիվանդությունների վրա, նպատակ ունենալով՝ մեր կոլտնտեսություններում մշակվող վոչ-բերքատու և անօրակ սորտերը՝ փոխարինել արժեքավոր և բերքատու սորտերով:

Վողջունելով այս տեսակ աշխատանքների լույս ընծայելը, հույս ունենք, լոր հետագա աշխատանքներում հեղինակը կանգ կառնի նաև տեսակավոր սորտերի ագրոտեխնիկայի վրա, մի բան, լոր չափազանց կարևոր է:

Գրոթ. Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Դաշտավարութեան մեջ մշակվող բոլոր կուլտուրաների, այդ թվում նաև կարտոֆիլի տեսակավոր ու լավորակ սերմացուի ապահովումն անհրաժեշտ ու անհետաձգելի խնդիրներից մեկն է հանդիսանում սոցիալիստական յերկրագործութեան համար:

Ձնայած, վոր ժամանակին մեր վերադաս մարմիններն այս կուլտուրայի զարգացման ու ռացիոնալ տեղաբաշխման համար հատուկ վորոշումներ են արել (ՀամԿ(բ)ԿԿենտկոմի 1931 թ. ոգոստոսի 2-ի, XVII և XVIII կուսհամագումարների վորոշումները), մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում, կարտոֆիլի սերմնաբուծութունը դեռևս չլուծված խնդիրներից մեկն է հանդիսանում:

Սոց. գյուղատնտեսութեան արդի հարաճուն վիճակը և կարտոֆիլի ցանքերի տարածութիւնների ընդարձակումը 3-րդ հնգամյակում՝ միանգամայն իրավացի պահանջ են դնում կարտոֆիլի սերմնաբուծութեան խնդիրներն ամենակարճ ժամանակամիջոցում լուծելու:

Մեր մի քանի շրջանների (Ալավերդի, Կիրովական, Լենինական, Դիլիջան, Ապարան և այլն) կարտոֆիլի ցանքերի մեծ մասսիվները ներկայացնում են սորտերի մեխանիկական խառնուրդ, վորից ընկնում է կարտոֆիլի բերքատվութիւնը: Ցանքերի խայտաբղետ լինելուն նըպաստել է այն, վոր տարբեր ժամանակներում (1931 և 1938 թ.թ.) մեծ քանակութեամբ Հայաստան է ներմուծվել սպառողական նշանակութիւն ունեցող կարտոֆիլի սորտերի խառնուրդ և բաշխվել է տեղերին վորպես սեր-



մացու։ Այդ ցանքերում գերակշռում են կարտոֆիլի այն-  
պիսի սորտեր, վորոնք ունեն հասունացման տարբեր շը-  
ջան, տարբեր բերքատվություն ու վորակ և տարբեր դի-  
մացկունություն՝ սնկային, վիրուսային և բակտերիալ հի-  
վանդությունների նկատմամբ։

Հայտնի չէ, վոր կարտոֆիլի տարբեր սորտեր տար-  
բեր դիմացկունություն ունեն ձմեռելու ժամանակ, և յե-  
թե աշնան բերքահավաքին կարտոֆիլը չի տեսակավոր-  
վում և ձմռանը բոլոր տեսակները պահվում են միասին,  
այդ դեպքում կարտոֆիլի կորուստը պահեստատեղում  
անխուսափելի չէ։

Մեր կատարած հետազոտական աշխատանքները (1932  
—1935 և 1938 թ.թ.) պարզել են, վոր կարտոֆիլի ցան-  
քերում առայժմ տարածված է 24 սորտ, վորոնց մեջ կան  
առատ բերքատու և դիմացկուն սորտեր։

Ուստի կարտոֆիլի լավորակ ու բերքատու սորտ հայ-  
տաբերելը, առանձին հողակտորներով այն առանձնացներն  
ու դարգացները հրատապ աշխատանքներից մեկը պետք է  
համարել կարտոֆիլի սերմնաբուծություն զործում։

Դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի անց-  
կացնել կարտոֆիլի ցանքերի հետազոտություն և ապ-  
սլորացիա (գնահատում)։

Այդ աշխատանքի հիմնական նպատակն է պարզել և  
հայտաբերել կոլտնտեսություններում և խորհրդատեսու-  
թյուններում մշակվող կարտոֆիլի սորտային կազմը՝ վա-  
տորակ սորտերը տեսակավոր ու բերքատու սորտերով փո-  
խարինելու համար։

Հայտաբերված 24 սորտերն ըստ իրենց տնտեսական  
արժեքի կարելի չէ բաժանել յերկու խմբի.

ա) արժեքավոր սորտեր, վորոնց ներկայությունը ցան-  
քերում առայժմ թույլատրելի պետք է համարվի, մինչև



Հողթողկոմատի կողմից ընդունված ստանդարտ սորտերի մասսայորեն տարածումը, և

բ) սորտեր, վորոնց բերքատվությունն ու վորակը համեմատաբար ցածր և և վորոնք ցանքերում յենթակա յեն խոտանման:

Տնտեսական նշանակություն ունեցող արժեքավոր սորտերի խմբին պատկանում են հետևյալները.

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1. Վաղահաս վարդագույն | 8. Մենժինկա Մելենկովի |
| 2. Եպիկուր            | 9. Վոլտման            |
| 3. Մագնում բոնում     | 10. Սվիտեզ            |
| 4. Ժողովրդական        | 11. Սիլեզիա           |
| 5. Լուրի              | 12. Մերկեր            |
| 6. Կոլեկտիվային       | 13. Կրյուգեր          |
| 7. Մաժեստիկ           | 14. Գերոյ             |

Ստանեկի սորտերի խմբին են պատկանում հետևյալները, վորոնք ըստ առանձին շրջանների ցանքերում շատ պակաս չափով են տարածված.

- |                                |                      |
|--------------------------------|----------------------|
| 1. Պրիմել                      | 6. Վարդագույն մելլիա |
| 2. Նեստոր                      | 7. Բեկուպլոտ         |
| 3. Ալկոնոլ կապտոմանուշակագույն | 8. Սոշոր տերևանի     |
| 4. Կարմրաչյա                   | 9. Դեղնակարմրավուն   |
| 5. Զուգուգկա                   | 10. Զուգունկա        |

Սորտ ընտրելու խնդրում հիմնականը տվյալ տնտեսության զարգացման ուղղությունն և և նրա պահանջը սորտի նկատմամբ:

Այս տեսակետից կարտոֆիլի գոյություն ունեցող սորտերը հիմնականում բաժանվում են յերեք խմբի.

ա) սեզանի, բ) գործարանային և գ) անառնակերի:

Այս խմբերից յուրաքանչյուրը, նայած իր վեգետացիային (աճեցողության և զարգացման տևողության), լինում է՝ 1) վաղահաս, 2) միջահաս և 3) ուշահաս:



Նայած տնտեսության պահանջներին՝ հիմնականում գերակշռող տեղ է բռնում այս կամ այն խումբը, և մշակվում է ցանկացած սորտը: Որինակ՝ խոշոր քաղաքների ու խոշոր բանվորական կենտրոններին կից շրջանների տնտեսությունները, բերքը շուտ շուկա հանելու և աշխատավորության սպառողական պահանջը բավարարելու համար, մշակում են սեղանի խմբին պատկանող կարտոֆիլի վաղահաս սորտերը:

Գործարանային խմբին պատկանող կարտոֆիլի սորտերից պահանջվում է վաղահասություն, մեծ բերքատուլություն և շատ ուլա (20—25<sup>0</sup>/<sub>0</sub>):

Անասնակերի խմբին պատկանող սորտերից պահանջվում է շատ բարձր բերքատուլություն ու լավ ձմեռելու հատկություն:

Հաշվի առնելով մեր աշխատավորության պահանջները, Հոգեօրհիմատը 1937 թ. վորոշել է մեր շրջաններում դարգացնել սեղանի—սպառողական նշանակություն ունեցող կարտոֆիլի—սորտեր:

Հիմնականում մշակվող սեղանի սորտերից ընդունված են վորպես ստանդարտ՝

1. «Շալիկուր» (վաղահաս), 2. «Լորիս» (միջահաս)
  3. «Յուբել» (միջահաս, միայն Դիլիջանի շրջանի համար)
- Ժամանակավորապես թույլատրված է.

1. «Ժողովրդական» սորտը (միջահաս), վորովհետև մեր մասսիվ ցանքերում դա բարձր զոտասորտ է, 2. «Վաղահաս վարդագույն» սորտը (վաղահաս) և վերը հիշված արժեք ունեցող սորտերը, վորոնք կարտոֆիլի ցանքերում շատ քիչ տոկոս են կազմում, բայց իրենց տնտեսական հատկանիշներով բարձր են համարվում, քան «Ժողովրդական» սորտը:

Կարտոֆիլի ցանքերի գնահատությունը կապ ունի



սորտը ճիշտ վորոշելու և ճանաչելու հետ: Ուստի սորտը վորոշելու համար հիմք են ընդունված տվյալ բույսի արտաքին ձևաբանական հատկանիշները.

1. պալարի գույնը.

2. » ծլի գույնը.

3. ծաղկի գույնը:

Այս յերեք հատկանիշները վորոշ չափով հատուկ են սորտին ու նրա համար բնորոշ են:

Բույսի վերգետնյա մասերի (թուփ, ցողուն, տերև) հատկանիշները լրացուցիչ դեր են խաղում սորտը ճանաչելու մեջ, չնայած վորոշ դեպքերում յենթակա յեն փոփոխման:

Պալարի ձևը (ձվաձև, յերկարավուն, կլոր, տակառաձև և այլն) անկայուն ե և կախված ե հողային ու կլիմայական պայմաններից:

Սորտը ճանաչելու համար մենք նկարագրել ենք կարտոֆիլի թուփը, ցողունը, սերեվը, ծաղկի, պալարի, ծլի գույնը, տվել ենք սորտի աշխարհագրական տեղաբաշխումը և տնտեսական հատկանիշները:

Այս գրքուկում նկարագրվում են մեր կարտոֆիլացան շրջաններում տարածված, առայժմ 24 հայտնի սորտերից, կարտոֆիլի այն սորտերը, վորոնք ներկայումս վորոշ տնտեսական արժեք ունեն, և մի քանիսն ել այն սորտերից, վորոնք ցանքի գնահատման ժամանակ յենթակա յեն խոտանման:

Բացի այդ, նկարագրված են մեզ մոտ տարածված վորոշ հիվանդություններ, վորոնք ըստ առանձին տարիների մեծ փոփոխություններ են հասցնում կարտոֆիլի բերքատրվող թյանը:



## Ե Պ Ի Կ Ո Ւ Ր

Վաղահաս և սեղանի սորտ և համարվում, հայտնի չէ իրեն համեղությամբ, չնայած վոր ձմեռելուց հետո համը քիչ փոխում է դեպի վատը: Տարածված է մեր Միության



Նկ. 1. Ե պ ի կ ու Ր.

Խոշորագույն բանվորական կենտրոնների և քաղաքների մոտակա շրջաններում: Մուծված է Նորհրդային Հայաս-



տան 1932 թ.: Այս սորտը մեզ մոտ տարածված է Ստեփանավանի, Ալավերդի, Կոտայքի շրջաններում:

Տնտեսական հատկանիշները.—Վորպես վաղահաս սորտ՝ բերքատու չէ, հեկտարից ստացվում է 120—150 ցենտներ, հիվանդությունների վերաբերմամբ համեմատաբար դիմացկուն է, ձմեռում է լավ (տես. նկ. 1):

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Թուփը միջահասակ է, վաղ թառամող, ցողունը յերկաթագույն պիգմենտավորված է:

Տերեվը բաց-կանաչավուն, փայլուն, տերևամասերը խոշոր չեն, տերևամասերի առաջին զույգ փոքր տերևամասնիկները նստած են ջղի վրա և բանտիկաձև են, իսկ առանձին տերևամասնիկը սրտաձև է:

Ծաղիկն սպիտակ է, ծաղկաբույլը հավաք է, պլուտուղ չի տալիս:

### ՎԱՂԱՀԱՍ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ

Տեղերում անվանում են «Գալգալոս», «Ամսական» և այլն. վաղահաս է, բերքը կարելի չէ վերցնել ցանքից 65—70 որ հետո. տարածված է Միության տարբեր մարզերում և Անդրկովկասում: Մեզ մոտ «Վաղահաս վարդագույնի» մաքուր ոջախներ չկան, բայց այդ սորտը գտնվում է կարտոֆիլի ցանքերում վորպես խառնուրդ: Մաքուր ոջախներ հայտարբերել ենք (1932 թ.) Խորհրդային Վրաստանի Ախալցխայի Թուրշի յենթաշրջանում:

Բանվորական կենտրոնների ու քաղաքամերձ անտեսությունների սպառնողական կարիքները բավարարելու տեսակետից մեծ արժեք ունի:

Տնտեսական հատկանիշները.—Շատ համեղ է, ուստի և համարվում է սեղանի՝ կարտոֆիլի տեսակ:



Միջին բերքատվությունը մեկ հեկտարից տատանվում է 80—130 ցենտների միջև:

Ուլա քիչ է պարունակում ( $16^0/0$ ), վոր և պահանջվում է ընդհանրապես սեղանի կարտոֆիլի տեսակից:



Նկ. 2. Վաղահաս վաղազույց.

Մեզ մոտ ուլայի  $0/0$ -ը տատանվում է ըստ շրջանների 19—20-ի միջև: Շատ վատ ձմեռող է և յենթակալ է սնկային հիվանդությունների: Անդրկովկասի համար համարվում է «Ժամանակավորապես թուլատրված» սորտ:

Պալարն իր ձևով հարմար չէ շարքացանով ցանելու համար (տես նկ. 2):



## ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալարը յերկարավուն ե (վարունգաձև), բաց վարդա-  
գույն, հարթ — յերեսանց նստած կարմրաձև աչքե-  
րով, բունը հավաքված ե, ծիլը բաց-կարմրամանուշա-  
կագույն:

Թուփը ցածրադիր ե, լավ տերևակալած, վաղ թառա-  
մող, ցողունն անկյունավոր ե, գերշ գույնի:

Տերեփը խոշոր ե, մուգ-կանաչ, փայլուն. վերջադիր  
կենտ տերևամասը, վորը կախ ե ընկած, ծածկվում ե վեր-  
ջին գույշ տերևամասով (բնորոշ հատկանիշ):

Ծաղիկն սպիտակ ե, թուփն առատ ծաղկում ե, սերմ-  
նարանի կտրվածքը բաց-կարմիր գույն ունի: Միության  
հյուսիսային պայմաններում պտուղ չի տալիս: Անդրկով-  
կասում պտուղ տալիս ե:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ (ՌԻԽՏԵՐ)

Տեղերում այս սորտին տարբեր անուններ են տալիս՝  
Կամենկա, Մալականի, Շամբարակի, Ցարսկի, Գուբերնա-  
տի, Ջալալոդլի, Բարանբուլ և այլն: միջահաս ունիվերսալ  
սորտ ե համարվում, լավ բերքատու յե ու առատ ոսլա յե  
պարունակում: Տարածված ե Միության տարբեր մարզե-  
րում, սկսած հյուսիսից դեպի հարավ: Խնչպես Ո. Վրաստա-  
նում, այնպես ել մեզ մոտ հայտաբերված են մաքուր ու-  
ջախներ տարբեր շրջաններում (Ստեփանավան, Կիրովա-  
կան, Կարմիր, Նոր-Բայազետ, Մարտունի):

Այս սորտը Հայաստանում համարվում ե առայժմ «ժա-  
մանակավորապես թույլատրված» սորտ, նկատի ունենա-  
լով, վոր դրանից ավելի լավորակ և մասսայորեն տարած-  
ված սորտ չունենք:



Տնտեսական հասկանիւթներ.—Այս սորտի միջին բեր-  
քատուլթյունը Ռուսաստանում համարվում է 160 ցենտ-  
ներ. պալարի ոսլան համարվում է 18<sup>0</sup>/<sub>0</sub>: Մեղ մոտ միջին  
բերքատուլթյունը կարելի յե համարել 130—200 ցենտ-  
ներ (Ստեփանավանի շրջանի Պուշկինո, Պրիվոլնի, Կուր-  
թան գյուղերում, Նոր-Բայազետի շրջանից Սարուխան  
գյուղի կոլտնտեսուլթյունում, վորոնք ունեն այդ սորտի  
մաքուր ոջախներ):

Պալարի ոսլան կազմում է 21—24<sup>0</sup>/<sub>0</sub> Սևանի ալա-  
զանում: Նայած շրջանի պայմաններին՝ ոսլայի միջին <sup>0</sup>/<sub>0</sub>-ը  
տատանվում է 20—25-ի միջև:

Մակային հիվանդուլթյուններին համեմատաբար վատ  
է դիմանում և շատ է վնասվում ֆիտոֆտորա ինֆենս-  
տանս սնկից:

Վերջերս մեղ մոտ այս սորտի պալարների վրա հայ-  
տաբերված է աստղաձև քոս հիվանդուլթյունը, վորը նը-  
պաստում է վնասակար ֆիտոֆտորայի զարգանալուն: Հի-  
վանդանում է վիրուսային հիվանդուլթյուններով:

Վատ է ձմեռում (ձմռան ընթացքում, հատկապես վատ  
կահավորված պահեստներում, արագ փշանում է): Մակա-  
յին հիվանդուլթյունների և համեմատաբար վատ ձմեռելու  
պատճառով այս սորտն ստանդարտ սորտերի շարքից հան-  
ված է մեր Միուլթյան վորոշ շրջաններում, ի թիվս վորոց  
և Անդրկովկասի հանրապետուլթյուններում. համարվում է  
«Ժամանակավորապես թուլյատրված» սորտ (տես նկ. 3):

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալարն սպիտակ է, ձվաձև, պալարի գագաթին կապ-  
տավուն բիծ կա. աչքերը նստած են վոշ խորը, ծիլը կապ-  
տամանուշակագույն է, բունը հավաքած:

Թուլիք բարձր է, փարթամ, ուշ է թառամում, ցո-  
ղունը՝ բարձրալիք, պիզմենտավորված է գորշ գույնի, վո-



18923  
A



Նկ. 3. Ժողովրդական.

Ըր ցայտուն յերևում է ցողունի ցածրամասին ամրացած տերևածոցերում: Թուփը բաց-կանաչավուն գույն ունի:

Տերեվը խոշոր է, կռվիտ, ծալքավորված է միջակ բացվածքավոր տերևամասերով: Այս սորտի համար բնորոշ



են կենտրոնական ջրի վրա նստած գույգ փոքր տերևա-  
մասերը, վորոնք յերկարավուն են և սրածայր:

Ծաղիկը փոքր է, գունատ, բաց-կապտամանուշակա-  
գույն. ծաղկի պսակաթերթերի գազաթններն սպիտակ են,  
վարսանդը յերկար և առեջքները բարձր. փոշանոթները կա-  
նաչ կիտրոնագույն են, շատ հաճախ այլանդակված (բնո-  
րոշ հատկանիշ): Խ. Ռուսաստանում և Միության հյուսի-  
սային պայմաններում սովորաբար պտուղ չի տալիս, իսկ  
Անդրկովկասում առատ պտուղ է տալիս:

## Լ Ո Ր Խ

Միջահաս ունիվերսալ սորտ է, կարող է ծառայել  
թե՛ սեղանի և թե՛ գործարանի համար: Համեմատաբար  
չորադիմացկուն է: Մեզ մոտ ընդունված է վորպես ըս-  
տանդարտ սորտ: Լեռնային շրջաններում բարձր բերք է  
տալիս:

Տարածված է Միության սևահողային մարզերում և  
մեզ մոտ՝ Ստեփանավանի ու Նոր-Բայազետի շրջաններում:

Տնտեսական հասկանիքներ.—Միջին բերքատվությունը  
մեկ հեկտարից 230 ցենտներ է: Ոսլայի միջին բերքա-  
տվությունը մեզ մոտ 22<sup>0</sup>/<sub>0</sub> է: Համեզ է և յեփելուց չի  
փխրվում: Չմեռում է շատ լավ հիվանդություններով հա-  
մեմատաբար պահան է վարակվում (տես նկ. 4):

## ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԵՇՆԵՐԸ

Պալար սպիտակ-դեղնավուն է, ձվաձև, աչքերը խո-  
րը չեն նստած, բունը հավաքված չէ: Պալարի գազաթի  
մասը փոքր բլրակ ունի:

Թուփը բարձր է, նուրբ, լավ տերևակալած, ցողունը  
անկյունավոր, ճյուղավորված և միանգամայն կանաչ:





Նկ. 4. Լ'ո ր խ.

Տեղեկ՝ մեջակ մեծություն, բաց կանաչ; նուրբ ու  
հարթ տերևամասերով. հաճախ ծայրամասի կենտ տերևա-  
մասը միացած է ցածի տերևամասի հետ և բլթակ է կաղ-  
մում (բնորոշ հատկանիշ):

Ծաղիկը՝ բաց-վարդամանուշակագույն, պսակաթերթե-  
րի գաղաթներն սպիտակ են. ընդհանրապես պտուղ չի տա-  
լիս. հայաստանում ամռանը յերկրորդ անգամ յերիտա-  
սարդ պալարներով ցանք կատարելու դեպքում առատ սեր-  
մերով պտուղ է տալիս:



Միջանառ սեզանի ու գործարանային սորա և համարվում: Տարածված և լ. Ռուսաստանի կենտրոնական մարզերում և Բելոռուսիայի սահմանամերձ գոտում: Կալ աճում և բոլոր հողերում:



Նկ. 5. Յ ո Ւ Բ ե լ .

Տնտեսական հասկանիլներ.— Բերքատուլությունը բարձր և, համեղ սորա և, ունի իմամունիտեա կարտոֆիլի քաղց-



կեղի դեմ: Հաղվագեալ ե հիվանդանում փոշենման քոսով,  
փորը սնկային հիվանդությունն է:

Չմեռում ե լավ: Այս սորտն ընդունված ե վորպես  
ժամանակավորապես թույլատրված սորտ՝ Դիլիջանի շրջա-  
նի համար, վորտեղ հողերը շատ վարակված են փոշենման  
ֆու կոչվող սնկային հիվանդությունով (տես նկ. 5):

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԾՆԵՐԸ

Թուփը բարձրագիւր ե, թույլ տերեւակալած. ցողունը  
պիգմենտավորված ե ե գորշ գույն ունի:

Տերեւը խոշոր չե, կնճռոտված ե. փոքր տերեւամա-  
տերը չեն գրկում ցողունը (բնորոշ հատկանիշ), այլ դեպի  
վեր են ուղղված:

Ծաղիկը կարմիր-մանուշակագույն ե, պսակաթերթե-  
րի գագաթն սպիտակ ե. պտուղ քիչ ե տալիս:

Պալարն սպիտակ ե, խոշոր, ձվաձե. աչքերն այնքան  
խորը չեն նստած:

Բույնը հալաքված ե:

### Մ Ե Ր Կ Ե Ր

Սեղանի ե գործարանային կարտոֆիլի միջանառ սորտ  
ե համարվում. պատահում ե վորպես խառնուրդ Ստեփա-  
նավանի, Նար-Բայագետի շրջանների կարտոֆիլի ցանքե-  
րում: Տարածված ե Սորհրդային Միության սևահողային  
մարզերում (Վորոնեժ, Պենյա ե այլն):

Տնտեսական հատկանիշներ.— Բերքատու յե (հեկտա-  
րի միջին բերքատվությունը 150 ցենտներ ե). քիչ ե հի-  
վանդանում, ձմեռում ե լավ, համեղ ե, ոսլայի պարունա-  
կությունը 20<sup>0</sup>/<sub>0</sub> է: Մեղ մոտ, Ստեփանավանում ե Մար-  
տունու շրջաններում, ոսլայի բարձր՝ 22—23<sup>0</sup>/<sub>0</sub> ե տալիս  
(տես նկ. 6):





Նկ. 6. Մ ե ր կ ե ր.

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Արտաքին հատկանիշներով այս սորտը նմանվում է «Փողոմբդական» սորտին:

Հիմնական տարբերթյունը հետևյալն է. ծաղիկը կապտամանուշակագույն է, պսակաթերթերն սպիտակ վերջավորությամբ ունեն, փոշանոթները վառ նարնջագույն են (ընտրուշ հատկանիշ):



Միջահաս անասնակերի սորտ ե համարվում: Հաճախ պատահում ե վորպես խառնուրդ «Կարմրաչյա» սորտի ցանքերի մեջ: «Զուգունկա» սորտը համարվում ե «Կարմրաչյա» սորտի մուտանտը:

Տարածված ե Ու. Ռուսաստանի կենտրոնական սեահո-ղային մարզերում ե մեզ մոտ՝ Կիրովականի, Ապարանի ե Սեանի ավազանի շրջաններում, վորպես խառնուրդ:

Տնտեսական հասկանիւթներ.— Բերքատու չե, մեկ հեկտարից տալիս ե 80 ցենտներ. ոսլայի պարունակությունը 13—15<sup>0</sup>/<sub>0</sub>-ի յե հասնում: Համեղ չե, սեղանի համար անպետք ե: Զմեռում ե վատ: Հիվանդություններին դիմացկուն չե: Յենթակա յե խոտանման:

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալար կապույտ ե, սպիտակավուն շերտերով, աչքերը մուգ-կապույտ են ու պալարի վրա խորը նստած ծիլը կապտամանուշակագույն ե:

Թուիր բարձր ե, վարթամ ճյուղավորված, ուշ թառամող:

Տերեվը հաշի ե, փայլուն, տերեւամասերը քիչ են. ծալբատերեւամասի հիմքը սեպածե ե, անոթները պիզմենտավորված են գորշ յերկաթագույնով:

Ծաղիկը մուգ-կապտագույն ե, ծաղկակոթունի ամբացման հիմքում կա մուգ-կապտագույն ողակ (բնորոշ հատկանիշ): Սերմնարանի յերկայնական կտրվածքն անգույն ե (բնորոշ հատկանիշ):

## Կ Ա Ր Մ Ր Ա Չ Յ Ա

Միջահաս անասնակերի սորտ և համարվում: Տարածված և Պ. Ռուսաստանի սեահողային մարզերում և մեծ մասը՝ Ալավերդու, Ապարանի, Կիրովականի, Ստեփանավանի Մեանի ավազանի շրջաններում, վորպես խառնուրդ:

Տնտեսական հասկանիւթներ.—Տնտեսական առանձին արժեք չի ներկայացնում: Բերքատու չէ: Մեկ հեկտարը միջին բերքատուությունը 80—90 ցենտներ և: Ոսկան 15<sup>0</sup>/<sub>0</sub> և կազմում: Համեղ չէ, ձմեռում և միջակ: Յենթա կա յե խոտանման, նկատի ունենալով, վոր ուժեղ կերպով վարակվում և վիրուսային հիվանդություններով և դիմաց կուն չէ սնկային հիվանդություններին:

## ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալարն սպիտակ և, կանոնավոր ձև չունի, վարդա գույն աչքերով, ուստի և կոչվել և «կարմրաչյա»: Աչքերը նստած են խորը: Ծիլը կարմիր-մանուշակագույն և:

Թուփը՝ միջակ, ճյուղավորված: Տերեամասերը՝ հարթ, փայլուն. ծայրագիւր տերեամասը խոշոր և, կախ ընկած թառամածի տեսք ունի:

Ծաղիկը՝ սպիտակ, մեղ մոտ առատ պտուղ և տալիս Ծաղկակոթունի՝ ամրացման հիմքում ունի կարմրագույն ողակ (բնորոշ հատկանիշ):

## Ձ Ո Ւ Գ Ո Ւ Տ Կ Ա

Տեղական սորտ և, շատ հաճախ և պատահում Մեանի ավազանի շրջանների կարաոֆիլի ցանքերում վորպես խառնուրդ:

Տնտեսական հասկանիւթներ.—Բերքատուությունը վա



է, համը՝ նույնպէս վատ. ոսլայականութիւնը պակաս է (14—16<sup>0</sup>/<sub>0</sub>): Ուժեղ վարակվում է հիվանդութիւններով, հատկապէս վիրուսային հիվանդութիւններով: Ձմեռում է վատ:

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Թուփը փարթամ, լայն է:

Յողունը՝ գորշագույն պիգմենտավորված:

Տերեվը խոշոր է, խիստ արտահայտված ջղերով (բնորոշ հատկանիշ):

Ծաղիկը՝ կարմիր-մանուշակագույն, առատ ծաղկում է, պտուղ է տալիս, պտուղները խոշոր են:

Պալարը կարմիր-սպիտակագույն է. սպիտակ բծերը տեղավորված են ամբողջ պալարի վրա. պալարը յերկարավուն է. ունի խորը նստած աչքեր:

Բունը հավաքված չէ:

### ՎՈԼՏՄԱՆ

Ուշահաս, գործարանային կարտոֆիլի սորտ է: Միութեան մեջ շատ տարածված է, հատկապէս կարտոֆիլի ոսլայի գործարաններին կից. մշակվում է նաև Հյուսիսային Կովկասում: Մեղ մոտ մաքուր ոջախներ հայտարարված են Նոր-Բայազետի, Ստեփանավանի, Լենինականի և Ալավերդու շրջաններում: Մյուս կարտոֆիլացան շրջաններում ցանքերի մեջ պատահում է վորպես խառնուրդ:

Տնեսաական հատկանիշները.—Միջին բերքատվութիւնը մեկ հեկտարից՝ 180 ցենտներ է: Ոսլայի միջին պտուղնակութիւնը 19—22<sup>0</sup>/<sub>0</sub> է: Ձմեռում է լավ, սեղանի համար այնքան չի գործածվում: Մակային հիվանդութիւններին համեմատաբար դիմացկուն է: Կարտոֆիլի գործարանային սորտի շրջանների համար համարվում է ստան-



դարտ սորտ: Պալարի ձևը հարմար է կարտոֆիլացան շարքացան մեքենաների համար (տես նկ. 7):



Նկ. 7. Վ. ռ | ս մ ա ն.

### ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալարը կլոր անկյունավոր է, բաց-կարմրավուն, աչքերը խորը չեն նստած:



Բունը հավաքված է:

Թուփը բարձր է, ուժեղ ճյուղավորված, ուշ է թա-  
ռամում. ցողունը բարձրադիր է: Տերևների կենտրոնա-  
կան ջիղն ու տերևի կոթունը, ինչպես և ամբողջ ցողու-  
նը ուժեղ պիգմենտավորված են գորշ յերկաթագույնի:

Տերեվը խոշոր է, գորշ կանաչավուն է, ցողունի հետ  
սուր անկյուն է կազմում. տերևամասերը նեղ են ու սե-  
պածե (բնորոշ հատկանիշ):

Ծաղիկը բաց վարդամանուշակագույն է, համեմատա-  
բար թույլ է ծաղկում. պտուղ չի տալիս:

## Ս Վ Ի Տ Ե Ձ

Ուշահաս գործարանային սորտ է, լավ է աճում կա-  
վոտ և ծանր հողերում: Շատ է տարածված Խ. Ռուսաստա-  
նում՝ կարտոֆիլի գործարանային սորտերի շրջաններում  
և Նոր-Բայադետի շրջանի կարտոֆիլի ցանքերում: Կան  
մաքուր սլախներ (Բադիկյան). կարտոֆիլի գործարանա-  
յին շրջանների համար ստանդարտ սորտ է համարվում:

Տնկեսական հասկանիքներ. — Բերքատու յե. ուլայի  
պարունակությունը բարձր է (23—24<sup>0</sup>); Ձմեռում է չա-  
լով: Հիվանդություններով համեմատաբար պակաս է վա-  
րակվում:

## ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Թուփը բարձրադիր է, փարթամ. ցողունը պիգմեն-  
տավորված է:

Տերեվը խոշոր է, բաց-կանաչ է, կնճռոտված. յեղրում  
թույլ ալիքավորված (բնորոշ հատկանիշ), փոքր տերևա-  
մասերը միջնադիր են նստած:

Ծաղիկը կարմիր-մանուշակագույն է, առատ պտուղ  
է տալիս:



Պալարն սպիտակ է, կտրածն, թեփակալած. աչքերը  
խորը չեն նստած:

Բունը հավաքված չէ:

## Կ Ր Յ Ո Ւ Գ Ե Ր

Ուշահաս անասնակերային սորտ է, տարածված է  
Միության սեահողային մարզերում: Մեզ մոտ ցանքերում  
չատ քիչ կա և խառնուրդ է կազմում: Մեծ ապագա ունի  
հետազայում մեր անասնապահական շրջաններում զարգա-  
նալու, փորպես անասունների կերի բազան ամբացնող կուլ-  
տուրաներից մեկը:

Տնտեսական հասկանիւթներ. — Առատ բերքատու սորտ  
է, համը վատ է: Մեզ մոտ մեկ հեկտարից ստացվել է  
350 ցենտներ: Ոսլայի պարունակութունը մեզ մոտ 19<sup>0</sup>/<sub>0</sub>  
է, իսկ Ս. Ռուսաստանում՝ 14<sup>0</sup>/<sub>0</sub>: Կրթուգերը համարվում է  
անասնակերային սորտ և համեմատաբար անհամ է: Ստե-  
փանավանի շրջանում ձմեռում է բավարար, հյուսիսային  
շրջաններում — Ս. Ռուսաստանում — վատ է ձմեռում:

Պալարների ձևը համեմատաբար կլոր է և հարմար է  
մեքենայով ցանք կատարելու համար: Հիվանդութուննե-  
րին համեմատաբար զիմացկուն է (տես նկ. 8):

## ՍՈՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Պալարն սպիտակ է, խոշոր, անկանոն ձևի. աչքերը  
մեծ են ու խորը նստած. ծիլը բաց կարմիր-մանուշակա-  
գույն է:

Բունը հավաքված չէ:

Թուփը բարձր է, փարթամ, ուշ թառամող. ցողունն  
ուղղահայաց է. սուր տերևներ ունի և պիգմենտավորված  
է գորշ գույնի: Տերևի կոթունը, ինչպես և գլխավոր ջիղը  
պիգմենտավորված են գորշ գույնի (բնորոշ հատկանիշ):



Տերեվը դեղնականաչ է, խոշոր ու կոպիտ, թեքված է  
 քիչ դեպի վեր. փոքր տերևամասերը քիչ են:  
 Ծաղիկը խոշոր է, բաց կարմիր-մանուշակագույն,  
 առատ պտուղ չի տալիս:



Շնկ. 8. Կեյսեգեր.

## ԿԱՐՏՈՖԻԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարտոֆիլը բազմաթիվ սնկային հիվանդություններ տնի, վորոնցից ամենավտանգավորը հանդիսանում է ֆիտոֆտորան. տեղում մեր աշխատողներն այդ հիվանդությունն անվանում են «ժանգյառ», «մրուկ», «սև»:

Այս հիվանդությունը լեռնային խոնավ շրջաններում՝ Ստեփանավանում, Կիրովականում, Դիլիջանում, առանձին խոնավ տարիներին (որինակ՝ 1931 և 1936 թ.թ.) չափազանցապես է հասցրել կարտոֆիլի բերքատվությանը:

Հիվանդություն առաջացնողը սունկ է, վորն անվանում են ֆիտոֆտորա ինֆենստաս:

Այս հիվանդությունը յերևում է ամռան յերկրորդ կեսում, սովորաբար հուլիս, ոգոստոս ամիսներին, առանձին թույլ թիերի վրա (տես նկ. 9):

Հիվանդ բույսերի տերեամասերի վրա առաջանում են գորշագույն կլոր բծեր: Նոնավ ժամանակ, տերևի թիթեղի հակառակ մասում, ջղերի տակը, յերևում է բաց սպիտակ գույնի բորբոսի շերտ:


Այս սունկն արագ է բազմանում, նախ մեկ տերևի վրա, հետո միջատների, քամու կամ անձրևի կաթիլների շնորհիվ փոխանցվում է ամբողջ թիին և այնուհետև վարակը տարածվում է ամբողջ դաշտում, վորը խանձվածքի տեսք է ընդունում:

Կարտոֆիլի թուփը մեռնում է ժամանակից շուտ, իսկ հողում առաջացած յերիտասարդ պալարները մնում են խակ և մանր:



Այս հիվանդությամբ ուժեղ վարակված դաշտերի քերքատվությունը սովորաբար շատ ցածր է լինում:

Սունկի վարակը չի սահմանափակվում բույսի վերգեանյա ցողունի և տերևների վոչնչացումով. նա փոխանցվում է հողի մեջ՝ պալարների վրա:



Նկ. 9. Կարսոփիլի սերեվի յեվ սերեվամասի վարակվածությունը փսոփոքու սնկով.

Վարակված պալարների վրա առաջանում են մուգ գույնի, բիշ փոս ընկած կետեր: Փոսիկների տակի միան սկզբում շաղանակագույն է, հետագայում, վարակի տարածվելու հետ, նա սև գույն է ընդունում, և պալարն սկսում է արագ նեխել:

Հիվանդացած պալարն ավի մեջ տրորելիս նեխած

ձվի հոտ և տալիս, համը փսխում է և ապառման համար անպետք է դառնում:

Բերքահավաքի ժամանակ վարակը կարող է անցնել առողջ մնացած պալարների վրա և ձմռան պահեստատեղերում բարձր շերմության (Յ. 8—15<sup>0</sup>) առկայություն դեպքում կարճ ժամանակում կարող է տարածվել և փրշացնել կարտոֆիլը: Վոշնչացնելով պալարը, այս սունկը նպաստում է միաժամանակ նաև զանազան բակտերիալ հիվանդությունների զարգանալուն, վորոնցից պալարներն ամբողջովին նեխում են:

### ՊԱՅԲԱՐԻ ՁԵՎԵՐԸ

1. Յանքի համար ոգտագործել միանգամայն առողջ, միջին և խոշոր մեծություն ունեցող (60—100 գրամ) պալարներ:

2. Հիվանդությունը յերևան դալու ժամանակ բույսը սրսկել բորդոյան հեղուկով կամ փոշուով պրեպարատով: Յեթե հորդ անձրևները լվանում են սրսկածը, անհրաժեշտ է սրսկումը կրկնել:

3. Այն շրջաններում, վորտեղ ֆիտոֆտորան ուժեղ է տարածված, կարտոֆիլի թփի բուկը բարձր պետք է տալ:

Բարձր հողաշերտի մեջ այս սունկից առաջացած հիֆերը (մագանման թելիկներ) չեն հասնում հողի մեջ գլուխով պալարներին, հետևապես և չեն կարողանում վարակել: Փորձերը ցույց են տվել, վոր ֆիտոֆտորայի հիֆերը թափանցում են հողի մեջ 10—13 սանտիմետր:

4. Բերքահավաքից 10—13 օր առաջ դուրս քաշել վարակված թփերը, հանել դաշտից և այրել:


5. Բերքահավաքի և պահպանման ժամանակ առանձնացնել հիվանդ պալարներն առողջներից: Այն պալարները, վորոնց վրա փոս ընկած գորշագույն կետեր կան, ան-



սլայման առանձնացնել, վորպեսզի ձմռան պահպանման  
 ժամանակ վարակի աղբյուր չդառնան:

6. Բերքահավաքը կատարել չոր, արևոտ օրերին:

7. Ձմռան պահպանման ժամանակ պահեստի կամ բուր-  
 տի ջերմությունը պահպանել  $3.+1^0$ -ից մինչև  $3.+2^0$ .  
 Ղրա համար պետք է ապահովել պահեստի կամ բուրտի  
 նորմալ ոդափոխությունը:



Նկ. 10. Կարսոֆիլի քփի վառակվածությունը  
 «սել վոսֆ»-ով.

Բակտերիալ հիվանդություններից իր փաստակարու-  
 թյամբ հայտնի չե «սե վոտք» հիվանդությունը: Տարած-  
 ված է մեղ մոտ՝ Ստեփանավանում, Նոր-Բայազետում,  
 Դիլիջանում, Շամշադինում: Հիվանդությունն առաջանում

ե բույսի սկզբնական աճման շրջանում, մինչև կարտոֆիլի ծաղիկելը:

Հիվանդ բույսերի ցողունի հիմքը հողում սեանում ե և հետագայում նեխում: Այդպիսի թուփը հեշտությամբ հողից դուրս ե քաշվում: Սովորաբար նման թփերը նվազ են լինում, նրանք դեղնում են, իսկ նրանց տերևները վոլորվում են: Այդպիսի թփերն արտաքինից շատ շուտ աչքի յեն ընկնում (տես նկ. 10):

Վարակվում ե նաև պալարի կենտրոնական մասը, վորից առաջանում ե փչակ: «Սև վոտը» հիվանդությունից ուժեղ չափով ընկնում ե կարտոֆիլի բերքատվությունը:

Վարակեա պալքարի հիմնական միջոց, վարակված թփերը պետք ե արմատախիլ անել և այրել:

Անհրաժեշտ ե հողից հեռացնել նաև վարակված թփերի պալարները:

## ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիրուսային հիվանդությունները շատ են տարածված մեր Միւլթյան հարավային մասերում:

Մեզ մոտ վիրուսները տարածված են Լենինականում, Մարտունիում, Դիլիջանում, Ստեփանավանում և այլ շրջաններում: Նայած վիրուսի տեսակին՝ կարտոֆիլի բերքատվությունը վորոշ չափով ընկնում ե (տես նկ. 11):

Մինչև այժմ հայտնի չե վիրուսային հիվանդություններ առաջացնող պատճառը: Հայտնի յե այն, վոր հիվանդությունները փոխանցվում են հողի լվիճների, բակտերիաների, հիվանդ պալարների ու նրանց հյուլի միջոցով:

Այս հիվանդություններից վարակված բույսի վերգետնյա մասերն այլանդակվում են, իսկ թուփը գաճաճ ե լինում:



Վերջին տարիներս հնարավոր յեղավ վիրուսը հայ-  
տաբերել նաև պալարներում: Պատրաստված և հատուկ շի-  
ճուկ: Այդ շիճուկի միջոցով հնարավոր և լինում վիրուսով



Նկ. 11. Կարսոփիլի տեղի վարակվածությունը վիրուսով.  
հիվանդ պալարներն առողջներից ջուկել և ցանքի համար  
չփորձադրել:

Վերջում հայտաբերելու գործողությունն այժմ շատ հեշտ է. պալարը ծլեցնում են և աչքերից պոկում մեկ կամ մի քանի ծիլ, փաթաթում մաքուր մաուլայի մեջ, հատուկ մկրատ-ճզմիչով քամում մի կաթիլ հյուսթ որյեկտիվի մաքուր ապակու վրա և հետո դրա վրա գցում են մի կաթիլ այդ շիճուկից: Մեկ կամ կես բուլեյից հետո վերջում հայտաբերվում է: Յեթե պալարը հիվանդ է վիրուսով, կաթիլի յեզրից առաջանում է սպիտակ շերտավոր նստվածք, իսկ յեթե վարակ չկա, շերտավոր նստվածք չի առաջանում, և կաթիլի գույնը լինում է միապաղաղ (տես նկ. 12):



Նկ. 12. Շիճուկի միջոցով պարզված է վիրուսի ներկայությունը.

Մեր շրջանների կարտոֆիլի ցանքերում տարածված վնասակար վիրուսներից հայտնի յեն հետևյալները՝

- 1) կնճռոտված մողայիկա և գանգրաններություն.
- 2) Շերտավոր մողայիկա.
- 3) Կախարդի ավել:

#### 1. ԿՆՃՌՈՏՎԱԾ ՄՈՂԱՅԻԿԱ. ՅԵՎ. ԳԱՆԳՐԱՆԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիվանդացած բույսի աճեցողությունը դանդաղում է, թուլին ընկճված տեսք է ընդունում, վերևի տերևներն այլանդակվում են և կնճռոտվում: Տերևների յեզրերը շատ հաճախ ծովում են, դեղին գույն ստանում, դառնում փրխ-



բուն, կոտորվող, շնորհիվ այն բանի, վոր ոսկան տերեխց չի անցնում բույսի մյուս որգանները և մնում է տեղում:

Բույսի ներքևի տերևները, վորոնք մոտ են հողին, շատ հաճախ չորացած են լինում:

Այս հիվանդության հետ գունդընթաց շատ հաճախ նույն բույսի վրա հանդիպում է և գանգրահեր մոզայիկան (տես նկ. 13):

## 2. ՇԵՐՏԱՎՈՐ ՄՈԶԱՅԻԿԱ

Այս վիրուսով հիվանդ բույսերի տերևների վրա սկզբնական շրջանում առաջանում են մանր, անկյունավոր, մուգ գույնի բծեր: Տերևի թիթեղի ներքևի կողմից ներքանք նկատելի յեն և մեծ մասամբ դասավորված են տերևի ջղերի վրա:

Այդ բծերը յերևում են նաև տերևի կոթունի ու ցողունի վրա և գորշ-յերկաթագույն տեսք ունեն: Յերբեմն այդ հիվանդությունը նկատելի յե դառնում կարտոֆիլի առանձին սորտերի պալարների մաշկի կամ աչքերի վրա, ուռուցիկներ և առաջացնում, հյուսվածքն այդ մասում ճաքճքվում է, և աչքերը մեռնում են: Հիվանդ պալարի վրա դրսից անհարթություն է առաջանում, և պալարը տեղ-տեղ նեխած տեսք է ունենում:

Այս վիրուսով հիվանդ պալարներից ստացվում են հիվանդ ու նվազ բույսեր, կնճռոտված և վորովման տերևներ:



Նկ. 13. Կարտոֆիլի բժի վարակվածությունը կրճնոտված մոզայիկա յեվ գանգրահերություն վիրուսով.



բով, վորոնք փխրուն են և կոտրատվող, այն պատճառով, վոր վերևում կուտակված ոսկան չի անցնում բույսի մյուս որգանները և մնում է տեղում: Հիվանդ թփի ներքին տերեւները նեխում և չորանում են: Այս վիրուսով հիվանդացած թփերը սովորաբար բերք չեն տալիս:



ԿԱՆԱՐԴԻ ԱՎԵԼ

Այս տիպի վիրուսը հիվանդացած բույսի թփակալուսն ուժեղացնում է և բույսին հովանոցի տեսք է տալիս:

Ցողունների թիվը սովորաբար նորմալից շատ ավելի յե լինում, իսկ տերեւները՝ պակաս մասնատված: Թուփը դաճած է լինում և չի ծաղկում, ցողունը՝ կլոր ու բարակ: Հիվանդ բույսը տալիս է բազմաթիվ մանր, խակ պալարներ (կախարդի ավել, տես նկ. 14):

Նկ. 14. Կախարդի ավել.

### ՊԱՅԳԱՐԻ ՁԵՎԵՐԸ

1. Յանքի համար ոգտագործել միանգամայն առողջ, միջին և խոշոր մեծություն ունեցող պալարներ:

2. Յանքի համար, անկախ պալարի մեծությունից, չօգտագործել այն պալարները, վորոնց աչքերի ընձյուղած ծիլերը մազի պես բարակ են:



3. Վերուսույ վարակված թփերը, ինչպես և պալար-  
ները, ցանքից պետք է արմատախիլ անել ու այրել:

### Կ Ո Ւ Դ Ր Յ Ա Շ

Կուղըրյաշը հետևանք է բույսի վոշ նորմալ զարգաց-  
ման և համարվում է պաթոլոգիկ յերևույթ, վորից փոխ-



Նկ. 15. Կ ու լ դ Ր յ ա շ.

վում է թփի վորջ տեսքը: Այդպիսի թփերը սովորաբար  
չեն ծաղկում, նրանց ցողունները լինում են ձգված, իսկ

տերեւամասերը կօրցնում են տերեւին հատուկ կարատուածությունը: Փոփոխված բույսի վերջադիր մասերը շատ ուժեղ են զարգացած և լայն թիթեղ ունեն: Այդ փոփոխությունն առաջացնող պայմանները հայտնի չեն:

Կուղրյաշը շատ ուժեղ զցում է ապրանքային կարտոֆիլի բերքատուությունը (տես նկ. 15):

Պայքարի միջոցը հետևյալն է.—սերմացուի համար պետք է ռգտագործել առողջ բույսերի խոշոր ու միջին մեծության պալարները:



## СОРТА КАРТОФЕЛЯ В АРМЕНИИ И ИХ БОЛЕЗНИ

Картофель является в настоящее время одной из основных пропашных культур в полеводстве нагорных районов Армянской ССР. Экономическое значение картофеля как пищевого продукта общеизвестно. Он культивируется как на богаре, так и на поливных участках.

Картофелесеющие районы в основном располагаются на высоте от 1575 до 2200 м. над уровнем моря. Климатические условия здесь характеризуются средней годовой 5—7° Ц, температурой вегетационного периода в 11—14° Ц, с суммой полезных температур до 2400° Ц. Атмосферные осадки составляют от 400 до 600 м.м.

По данным Х. П. Мириманяна, почвенный покров горной части Армянской ССР составляют горные черноземы с различными их вариантами.

Обследование посевов картофеля по Республике, проведенное нами (с 1932 по 1938 г.г. включительно), показало, что посевы картофеля в основном представляли смесь различных сортов, завезенных главным образом из разных районов Союза.

Всего было обследовано 18.000 га посева, и обнаружено пока 24 сорта картофеля, причем в посевах преобладает сорт "Народный", который занимает около 70% всех посевов.

Ниже приводятся названия встречающихся сортов картофеля, которые часто попадают как примеси и отдельными местами как чистосортные очажки.

- |                            |                          |
|----------------------------|--------------------------|
| 1. Ранняя Роза             | 8. Снежинка Меленковская |
| 2. Эпикур                  | 9. Вольтман              |
| 3. Магнум бонум            | 10. Свитезь              |
| 4. Народный                | 11. Силезия              |
| 5. Лорх                    | 12. Меркер               |
| 6. Корневский коллективный | 13. Крюгер               |
| 7. Мажестик                | 14. Герой                |



- |                   |                      |
|-------------------|----------------------|
| 15. Примель       | 20. Джугука          |
| 16. Нестор        | 21. Розовый из Милет |
| 17. Алкоголь с/ф. | 22. Крупнолистный    |
| 18. Красноглазка  | 23. Беллоплет        |
| 19. Чугунка       | 24. Желторозовый     |

В получении высоких устойчивых урожаев картофеля вопросы его семеноводства в данный период занимают особо важное место. Семеноводческая работа должна из года в год улучшать урожайные качества посадочного материала, применяя наряду с другими приемами агротехнического ухода за растениями и непрерывную прочистку посевов от больных и нетипичных для сорта малоурожайных кустов. Апробация в этом случае окажет серьезную помощь делу успешного размножения и широкого внедрения в производство посадочного материала высокоурожайных сортов картофеля.

Некоторые известные сорта картофеля, как, например: „Ранняя Роза“, „Лорх“, „Народный“, „Розовый из Милет“, „Вольтман“ в условиях Армянской республики имеют ряд морфологических и биологических признаков, почти не встречающихся в северных районах Союза. Так, например, сорт „Народный“ имеет окраску венчика ярко-сине-фиолетовую с белыми кончиками лепестков (редко попадают с белыми цветами) на высоте 2000 м. н. у. м. в Севанском бассейне и с белыми кончиками лепестков на высоте 1340 м. над уровнем моря в Степанаванском, Кироваканском и Шамшадинском районах. В литературе этот сорт описан, как имеющий венчик с бледно-фиолетовой окраской. Сорт „Вольтман“ описан в литературе, как имеющий красные клубни с красно-фиолетовыми цветами; в Кироваканском районе, в колхозах: Фиолетово, Гамзачиман, Варданлу и т. д. попадают отдельные кусты его с белыми цветами, имеющие клубни со светло-розовой окраской. Сорт „Лорх“ при летней посадке свежееубранными клубнями (1937—1938 г.г.) плодоносит, дает ягоды с вполне вызревшими семенами. Клоновым отбором нами установлено



что клубни сорта „Лорх“ могут взамен белой окраски иметь красную окраску. Сорта „Ранняя Роза“, „Народный“, „Розовый из Милет“ в некоторых районах Республики (Даралагезский, Шамшадинский, Степанаванский, Нор-Баязетский и другие) дают ягоды в достаточном количестве и с вполне вызревшими семенами. Плодоношение вышеприведенных сортов картофеля для селекции, несомненно, будет представлять большой интерес. О подобном примере у сортов „Лорх“ и „Народный“ в известной мне литературе не упомянуто.

Е. А. Столетова в своих работах отмечает плодоношение сорта „Ранняя Роза“ в картофельных посевах сел. Малышка (бывш. Даралагезский уезд), причем И. А. Веселовский эту форму выделяет в особый тип № 10, называя его „армянским“.

Помимо морфологического изучения сортов картофеля, нами изучены также сорта картофеля по их хозяйственным качествам. В результате проведенных нами работ по сортоиспытанию картофеля в 4-х районах Армянской ССР (за 1933—1935 г.г.), Н. К. Земледелия стандартными сортами признал следующие: для низменной зоны сорт „Эпикур“ (временно допускается сорт „Ранняя Роза“), для предгорной и горной зоны из раннеспелых—сорт „Эпикур“ (временно допускается Р. Роза) и из среднеспелых—„Лорх“ (временно допускается сорт „Народный“).

Широко применяя способ летней посадки картофеля по разработанному академиком Т. Д. Лысенко методу, мы получим полную возможность окончательно разрешить вопрос семеноводства картофеля в низменных и предгорных районах республики.

Имеются все условия для доведения в недалеком будущем средних урожаев картофеля по Республике от 200 до 250 ц. на га.

В этой работе мы ограничиваемся описанием некоторых сортов картофеля, встречаемых в посевах Республики, с указанием их местных названий и хозяйственной оценки, здесь же одновременно дается описание наиболее распространенных грибных и вирусных болезней и мер борьбы против них.




| №  | Սորտի անունը          | ՄորՖոլոգիական                                              |                                                                                        |
|----|-----------------------|------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------|
|    |                       | Պալարը                                                     | Թուփը                                                                                  |
| 1  | Եղիկոնի               | Գույնը սպիտակ, տակառած, աչքերը խոր չեն նստած               | Միջանասակ, վաղ թառամող, ցողունը յերկաթագույն պիզմենտավորված                            |
| 2  | ՎԱՂԱՀԱՍ<br>ՎԱՐԴԱԳՈՒՅՆ | Յերկարավուն (վարունգած), մարմնագույն, աչքը կիսավունած      | Ցածրադիր, վաղ թառամող, ցողունը անկյունավոր, գորշ գույնի                                |
| 3  | ԺՈՂՈՎԱՐԴԱԿԱՆ          | Չված, դադաթին կապտավուն բիծ ունի, սպիտակ է                 | Բարձր, փարթամ, ուշ թառամող, ցողունը թույլ պիզմենտավորված է գորշ գույնով՝ տերևածոցերում |
| 4  | ԼՈՐԻ                  | Չված, սպիտակ-դեղնավուն                                     | Բարձր, նուրբ, ցողունն անկյունավոր, կանաչ                                               |
| 5  | ՅՈՒԲԵԼ                | Չված, սպիտակ                                               | Բարձրադիր, թույլ տերևավալած, ցողունը պիզմենտավորված գորշ գույնի                        |
| 6  | ՄԵՐԿԵՐ                | Չված, սպիտակ, դադաթը կապտավուն բիծ ունի                    | Բարձր, փարթամ, ուշ թառամող                                                             |
| 7  | ՋՈՒԳՈՒՆԿԱ             | Չված, կապույտ, սպիտակ շերտերով, աչքերը մուգ կապույտ        | Բարձր, ուշ թառամող                                                                     |
| 8  | ԿԱՐՄՐԱՉՅՆ             | Կանոնավոր ձև չունի, աչքերը վարդագույն, աչքերը խոր են նստած | Միջակ, ուշ թառամող                                                                     |
| 9  | ՋՈՒԳՈՒՏԿԱ             | Յերկարավուն, կարմիր-սպիտակագույն ունի խորը նստած աչքեր     | Թարմ, լայն                                                                             |
| 10 | ՎՈՂՏՄԱՆ               | Կլոր, անկյունավոր, բաց կարմիր գույնի                       | Բարձր, մեծած, ուշ թառամող, ցողունը պիզմենտավորված է գորշ յերկաթագույն                  |
| 11 | ՍՎԵՏԵՉ                | Կլարած, թեփակաված                                          | Բարձր, ցողունը պիզմենտավորված չէ                                                       |
| 12 | ԿՐՅՈՒԳԵՐ              | Սպիտակ, անկանոն ձևի                                        | Բարձր, ուշ թառամող, ցողունն ուղղահայաց սուր տերևներով է գորշ գույնով պիզմենտավորված    |



# ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## ՀԱՏԿԱՆԵՐՆԵՐ

| Տ Ե Ր Ե Վ Ր                                                                                                   | Ծ ա դ ի կ ր                                                                                                    | Հասու-<br>նացու-<br>մը | Տնտ.<br>արժե-<br>քը              | Դիմաց<br>կուսն.<br>հիվան.  | Զմե-<br>ռումը        |
|---------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|----------------------------------|----------------------------|----------------------|
| Բաց կանաչավուն, փայ-<br>լուն, տերեւամասնիկը<br>սրտաձև                                                         | Սպիտակ, ծաղկաբույլը<br>հավաքված, պտուղ<br>չի տալիս                                                             | Վաղա-<br>հաս           | Սեղա-<br>նի                      | Հալ                        | Հալ                  |
| Մուգ կանաչ, փայլուն,<br>վերջադիր կենտ տերեւ-<br>մասը ցած ընկած, ծածկ-<br>վում է վերջին զույգ<br>տերեւամասերով | Սպիտակ, սերմնարանի<br>կտրվածքը բաց կարմիր<br>գույն ունի Անդրկով-<br>կասում պտուղ է տալիս                       | Վաղա-<br>հաս           | Սեղա-<br>նի                      | Վատ                        | Վատ                  |
| Բաց կանաչ, ծաղկավոր-<br>ված, տերևի անոթը ցո-<br>ղունի հետ կապտավուն<br>պիգմենտավորված                         | Բաց կապտամանուշակա-<br>գույն, փոշանոթները բաց<br>կիտրոնագույն, շատ հա-<br>ճախ այլանդակված: Պը-<br>տուղ է տալիս | Մի-<br>ջահաս           | Սեղա-<br>նի ու-<br>նիվեր-<br>սալ | Միջա-<br>կեց<br>պա-<br>կաս | Մեղ-<br>մոտ<br>միջակ |
| Բաց կանաչ, հարթ տերե-<br>վամասերով, ծալրամասի<br>տերեւամասը շատ հաճախ<br>բլրակաձև է                           | Բաց վարդամանուշակա-<br>գույն: Պտուղ չի տալիս                                                                   | Մի-<br>ջահաս           | Սեղա-<br>նի ու-<br>նիվեր-<br>սալ | Հալ                        | Շատ<br>լավ           |
| Մուգ կանաչ, ուժեղ ծալ-<br>քավորված, փոքր տերե-<br>վամասերը չեն զրկում<br>ցողունը                              | Կարմրամանուշակագույն,<br>պսակաթերթիկի զազաթն<br>սպիտակ                                                         | Մի-<br>ջահաս           | Սեղա-<br>նի ու-<br>նիվեր-<br>սալ | Հալ                        | Հալ                  |
| Բաց կանաչ, ծաղկավոր-<br>ված, ունի կարճ աղվա-<br>մաղ                                                           | Մուգ կապտամանուշակա-<br>գույն, փոշանոթները<br>վառ նարնջագույն                                                  | Մի-<br>ջահաս           | Սեղա-<br>նի ու-<br>նիվեր-<br>սալ | Հալ                        | Հալ                  |
| Բաց կանաչ, փայլուն, ա-<br>նոթները պիգմենտավոր-<br>ված կապտագույն                                              | Մուգ կապտագույն, ծաղ-<br>կակոթունի ամրացման<br>հիմքում մուգ կապտ. ողակ                                         | Մի-<br>ջահաս           | Անաս-<br>նակե-<br>րի             | Վատ                        | Վատ                  |
| Փայլուն, հարթ, ցածրա-<br>դիր տերեւամասը խոշոր,<br>կախ ընկած, թառամածի<br>տեսք ունի                            | Սպիտակ, ծաղկակոթունի<br>ամրացման հիմքում կարմ-<br>րագույն ողակ ունի                                            | Մի-<br>ջահաս           | Անաս-<br>նակե-<br>րի             | Վատ                        | Վատ                  |
| Խոշոր, խիստ արտահայտ-<br>ված շղերով                                                                           | Կարմրամանուշակագույն:<br>Պտուղ է տալիս: Պտուղ-<br>ները խոշոր են                                                | Մի-<br>ջահաս           | Անաս-<br>նակե-<br>րի             | Վատ                        | Վատ                  |
| Դորշ կանաչավուն, տերեւ<br>ցողունի հետ սուր անկյուն<br>է կալմում, տերեւամասերը<br>նեղ և սեպոձև են              | Բաց վարդամանուշակա-<br>գույն: Պտուղ չի տալիս                                                                   | Ուշա-<br>հաս           | Դործա-<br>րանու-<br>յին          | Հալ                        | Շատ<br>լավ           |
| Բաց կանաչ, չեզրերում<br>թույլ ալիքավոր                                                                        | Բաց կարմրամանուշակա-<br>գույն: Պտուղ է տալիս                                                                   | Ուշա-<br>հաս           | Դործա-<br>րան.                   | Հալ                        | Շատ<br>լավ           |
| Դեղնականաչ, խոշոր, փոքր<br>տերեւամասերը քիչ են                                                                | Բաց կարմրամանուշակա-<br>գույն                                                                                  | Ուշա-<br>հաս           | Անաս-<br>նակե-<br>րի             | Միջակ                      | Մի-<br>ջակ           |





## Л И Т Е Р А Т У Р А

1. Труды 2-го Закавказского совещания по селекции, семеноводству и агротехнике  
Статья Т. Саакян, изд. НКЗ ЗСФСР, Тифлис 1935 г.
2. Н. Д. ЗАЙЦЕВА—Описание сортов картофеля, участвовавших в государственном сортоиспытании. Изд. Сельхозгиза Москва 1935 г.
3. С. БУКАСОВ—Картофель.  
Труды по прикладной ботанике и селекции том XV —1925 г. Ленинград.
4. Т. С. ТЕР-СААКЯН—Конкурсное сортоиспытание в 4-х районах Армении. Машинопись, 1936 г.
5. Е. А. СТОЛЕТОВА—Полевые и огородные культуры Армении, том XXIII, изд. ВИПБ и новых культур, Ленинград 1930 г.
6. Н. Д. ЗАЙЦЕВА—Описание и хозяйственная характеристика сортов картофеля. Изд. Агроплакат, Москва, 1939 г.

Պատ. իմբագրել՝ Գ. Բաբաջանյան  
 Տեխ. իմբագրել՝ Վ. Մանուկյան  
 Սրբազրին՝ Մ. Զատիկյան  
 Կոնսուլսկ սրբազրին՝ Ռ. Տոնյան



Հանձնված և արտադրության 9/VIII 1939 թ.  
 Ստորագրված և տպագրության 28/IX 1939 թ.  
 Գլխավորի լիազոր Ն. Ն. 2886. Հրատ. № 44.  
 Պատվեր № 1, տիրաժ 1500, թղթի չափեր  
 62×84<sup>1</sup>/<sub>16</sub> 3 տպ. մամուլ, 1<sup>1</sup>/<sub>2</sub> թերթ թուղթ.  
 Արմեն-ի տպարան, Յերևան, Լենինի № 67



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008234



Т. СААКЯН  
Сорта картофеля в Армении  
и их болезни

АРМФАН, 1939, ЕРЕВАН.